## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.04.2018թ. ժամը 11-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Մ. Դանիելյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ, Վ.Մկրտչյանը, Լ, Հովհաննիսյանը, Մ. Անտոնյանը, Է. Արշակյանը և քարտուղար Ռ.Խաչատրյանը:

**Օրակարգ**

**Հայտերի բացման և գնահատման մասին**

### 1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով իրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

**1.«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ (ՀՀ Արարատի մարզ, գ. Այնթափ)**
**2.«Դը Բեստ Շին» ՍՊԸ (ՀՀ Արարատի մարզ, գ. Գոռավան)**
**3.«Պրիզմա Վան» ՍՊԸ (ՀՀ Լոռու մարզ, գ. Գուգարք)**
**4.«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ (ՀՀ ք. Երևան, նուբարաշեն 11փ. 21/26)**
**5.«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ (Ազատության պող. նրբ., 4 շենք, բն.75)**
**6.«ԱԳԱԾ-777» ՍՊԸ (ք. Երևան, Շիրակի փակուղի 4)**
**7.«Արարատշին» ՍՊԸ (ՀՀ, ք. Արարատի մարզ, ք. Արարատ, Խանջյան 12)**
**8.«Ջեթ-Պրոֆի» ՍՊԸ (ՀՀ, ք. Արտաշատ,Մարքսի 83)**

### 2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են իրավերով պահանջվող փաստաթղթերը:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը**

| Չ/Հ | Անվանում | Քանակ | Նախահաշվային գին | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | «ԱՐԳՈՀՇԻՆ»ՍՊԸ | «Դը Բեստ Շին»ՍՊԸ* | «Պրիզմա Վան»ՍՊԸ* | «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ | «ՍԱՍՈՒՆԱՍ ԱՐ»ՍՊԸ | «ԱԳԱԹ-777»ՍՊԸ | «Արարատշին»ՍՊԸ | «Ջեթ-Պրոֆիլ»ՍՊԸ |
| 1 | ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա,համայնքի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման աշխատանքներ | 1 | 21900000 | 14500000 | 14600000 | 16300000 | 16400000 | 15208000 | 18200000 | 25038267 | 26645040 |

* Հանդիսանում է ԱԱՀ չվճարող:

**5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը որոշեց.**

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԱՐԳՈՀՇԻՆ»ՍՊԸ** –ին:
1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Դը Բեստ Շին»ՍՊԸ** –ին:

**2.** Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ներկայացվելու օրվանից հաշված մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

**Հանձնաժողովի քարտուղարին՝**

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ________________ Մ. Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ ________________ Վ.Մկրտչյան

________________ Լ, Հովհաննիսյան

________________ Մ. Անտոնյան

________________ Է. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Ռ.Խաչատրյան